ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 օգոստոսի 2023 թվականի N 1335 - Ա

«ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԴԻՄԱՑ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԵՎՐՈՊԼԱՍՏ 999» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 24-ի N 1343-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հավանություն տալ «Եվրոպլաստ 999» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ ընկերություն) կողմից ներկայացված ներդրումային ծրագրին՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությունը սույն որոշման 1-ին կետով սահմանված ծրագրի իրականացման նպատակով «Ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց» օժանդակության տրամադրման միջոցառման շրջանակներում ընկերությանը տրամադրում է աջակցություն՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ռաֆֆու փողոց 111/36 և 111/37՝ համապատասխանաբար 01-007-

0188-0048 և 01-007-0188-0030 կադաստրային ծածկագրերով արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների գազիֆիկացում, արտաքին ջրամատակարարում ապահովելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքների կառուցմամբ՝ համաձայն N 2 հավելվածի.

2) ընկերության կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում նախատեսվող ներդրումների ծավալը կազմում է 1 մլրդ դրամ և աջակցության տրամադրման շրջանակներում կառուցվող ենթակառուցվածքների հանրագումարային արժեքը չի կարող գերազանցել ներդրումային ծրագրի ընդհանուր արժեքի 20 տոկոսը.

3) ընկերության կողմից ներկայացված աջակցության տրամադրման շրջանակներում կառուցվող ենթակառուցվածքների հանրագումարային նախնական արժեքը կազմում է 20.2 մլն դրամ, եթե նախագծահաշվարկային ճշգրտումներից հետո արժեքն ավելանա, սակայն չգերազանցի որոշմամբ հաստատված հավելվածի՝ ընդունված ներդրումային ծրագրի ընդհանուր ներդրումների արժեքի 20 տոկոսը, ապա աջակցության տրամադրման շրջանակներում կառուցվող ենթակառուցվածքների նախագծահաշվարկային ճշգրտումներից հետո ավելացած արժեքի և նախնական արժեքի գումարի տարբերությունը նույնպես կֆինանսավորվի պետական բյուջեից: Սակայն, եթե նախագծահաշվարկային ճշգրտումներից հետո արժեքն ավելանա և գերազանցի որոշմամբ հաստատված հավելվածի 10-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ներդրումային ծրագրի ընդհանուր ներդրումների արժեքի 20 տոկոսի չափը, ապա ընկերությունը պարտավորվում է վճարել ներդրումային ծրագրի ընդհանուր արժեքի 20 տոկոսը գերազանցող մասը, որը կարգավորվելու է սույն որոշման 4-րդ կետով սահմանված՝ ընկերության հետ կնքվող պայմանագրով.

4) ընկերությունը պարտավորվում է ծրագրով սահմանված ժամանակացույցով իրականացնել նախատեսվող ներդրումները և վերջիններիս վերաբերյալ սույն որոշման 4-րդ կետով սահմանված՝ ընկերության հետ կնքվող պայմանագրի դրույթների համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել անկախ աուդիտորական

ընկերության կողմից գնահատված տարեկան հաշվետվություններ՝ նախապես սահմանված ժամանակացույցին համապատասխան.

5) եթե ենթակառուցվածքի համար պետական միջոցներից կատարված ծախսերի փաստացի ծավալը գերազանցում է ծրագրի ավարտի վերջնական հաշվետվությամբ ներկայացված փաստացի կատարված ներդրումների ծավալի 20 տոկոսը, ապա գերազանցող մասն ընկերության կողմից վերադարձվում է պետական բյուջե, կամ համապատասխան գումարը փոխհատուցվում է որոշմամբ հաստատված հավելվածի 12.1-ին կետով սահմանված բանկային երաշխիքով.

6) ընկերության կողմից նախատեսվող ներդրումների չիրականացման դեպքում վերջինս պարտավորվում է վերադարձնել աջակցության տրամադրման շրջանակներում կառուցվող ենթակառուցվածքների հանրագումարային արժեքն ամբողջությամբ, կամ համապատասխան գումարը կփոխհատուցվի որոշմամբ հաստատված հավելվածի 12.1-ին կետով սահմանված բանկային երաշխիքով.

7) ընկերության ներդրումային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի կառուցման ավարտը 2023 թվականի դեկտեմբերի 31-ն է.

8) սույն որոշմամբ նախատեսվող ենթակառուցվածքի կառուցման պատասխանատու պետական մարմին է հանդիսանում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ սույն որոշման ընդունումից հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը համատեղ ներկայացնել «Ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց» միջոցառման շրջանակներում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը գումար հատկացնելու մասին որոշման նախագիծը:

4. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ ընկերության կողմից բանկային երաշխիքի ներկայացումից 20-օրյա ժամկետում ընկերության հետ կնքել համապատասխան պայմանագիրը՝ ծրագրի իրականացման և աջակցության տրամադրման վերաբերյալ:

5. Սահմանել, որ՝

1) ընկերությունը պարտավորվում է որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել որոշմամբ հաստատված հավելվածի 12.1-ին կետով սահմանված բանկային երաշխիքը.

2) ներկայացված՝ որոշմամբ հաստատված հավելվածի 12.1-ին կետով սահմանված բանկային երաշխիքը պետք է գործի մինչև ծրագրի ավարտը:

6. Սահմանել, որ սույն որոշմամբ նախատեսված համապատասխան պայմանագրի նոտարական ձևակերպման, ենթակառուցվածքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծախսերն ու կառուցվող ենթակառուցվածքների պետական գրանցման համար պահանջվող վճարներն իրականացվելու են ընկերության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

07.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ